որ ի ներսն էին ի պալատն արքունի առ երես արքային՝ զնոսա ոչնչացոյց թագաւորն խրատիւ մուֆտուն, զոմանս ըսպանեաց եւ զոմանս աքսորել ետ ի Մսըր, որք էին նախարարք և գանձապահք արքային և սեղանակից՝ յամենայն տեղիս առ նա կային։ Եւ որք աքսորեցանն էին՝ Խազնատար պաշի Ալի աղա, հիւնքեար հոճասի Ռէյհան աղա, եւ (պարոն), որք էին Մուրատին պարիսպ և օգնական ի սկզբանէ, վասն այսորիկ զայսոսիկ ոչնչացուցեալ՝ եթէ զթեւս նորա կործանեսցեն. բայց չարհանճարն Մուրատ պրծաւ կրկին ի բանէս յայսմանէ։

Եշիս (2 Օգոստ.) և Ուրբաթիս (3 Օգոստ.) մուշավէրէ և խորհուրդ առնէին ի պալատ թագաւորին. և զայս լըւաք՝ թէ մարդ ուղարկեալ են առ Հասան աղան և Իփշիրի տղին, զի զօրսն իւրեանց զոր ունին և բազում աւերութեան առիթ լինին և գործող՝ ցրուեսցեն այժմ և խաղաղութեամբ նստցին, թէ ոչ առնիցէք զհրամանս իմ այնուհետև մեղք ձեր ի գլուխս ձեր։

Կիրակի օրս ամսոյ Ե-իս բարեկենդան Աստուածածնի. Մուղտեսի Մարկոսն մեր եկեղեցին ժողով արար։ Եւ գնացաք յետ ժամուս առ Վարդապետն մեր, և անտի ելեալ գնացաք ի գերեզմաններն ի վերայ գերեզմանի հօրն Սուքիասի եղբօր մերոյ՝ աւրհնել զնա և ի վերայ քար ձգել, զի աստ եկն բանի ինչ և աստ մեռաւ։ Եւ գնացաք երեկոյիս դառնալով ընդ որ եկեալն էաք եւ զհացն անդ կերաք եւ ելեալ եկաք ի տեղի մեր։ Եւ առաւօտուս Կիրակէի Բ մարդ էին սպանեալ. չգիտացաք ո՛յք էին, զի գլուխսն ոչ գոյր ընդ նոսա, մինն՝ ի Ախսարայն եւ մինն՝ մօտ առ Տարբխանան։

Եշիս (9 Օգոստ.) Մուրատ փաշան փոխեցին և ետ զմօհրն վէզիրութեան Սուլէյման փաշային Մալաթիացոյ՝ որդի հայոյ։